Հաստատում եմ՝ տնօրեն Թ. Թադևոսյան

08.2022թ, Կ-120/1

Վանաձորի Ա. Խլղաթյանի անվան N18 միջնակարգ դպրոց

Գրադարանի աշխատանքային պլան

Գրադարանավար՝ Ալինա Մարաբյան

2022-2023 ուստարի

Գիրքը քո այն ուսուցիչն է ,
Որը քեզ երբեք չի պատժի ,
Բայց սխալ գործելու
Դեպքում քեզ ամեն ինչ
այնպես կհասկացնի,
Որ էլ երբեք նույն սխալը չես կրկնի:

Թե չլիներ գիրքն աշխարհում,
Կմնայինք նախնադարում,
Եվ չէր լինի դաս ու դպրոց,
Մարդիկ անգետ ու չարագործ
Փառաբանենք գրողներին,
Գիրքն ու տառը ստեղծողներին,
Եվ ուսումով նվիրական
Քայլենք դեպի վառ ապագան:

Բոլոր ժամանակներում էլ կարևորվել է մարդու կողմից ստեղծված այդ հրաշք հայտնագործությունը՝ գիրքը

Գրադարանային ակտիվություն

1. Մարգարյան Սոֆիա
2. Կոստանյան Անահիտ
3. Վարդերեսյան Լիլիթ
4. Շահվերդյան Մալվինա
5. Շահվերդյան Մարիաննա
6. Շախկուլյան Շուշաննա

Գրադարանի խնդիրները

1. Գրադարանի կարևորագույն խնդիրը մնում է երեխայի ընթերցանության կուլտուրան բացահայտելը:

2. Լուրջ ուշադրություն դարձնել դասագրքերի պահպանմանը:

3. Հարստացնել գրադարանի գրքային ֆոնդը

4. Ուշադրության կենտրոնում պահել հիշարժան տարեթվերը:

5. Կազմակերպել միջոցառումներ:

Այդ միջոցառումները նպաստում են աշակերտների մտահորիզոնի ընդլայնմանը, ձևավորում հարգանք երկրի մշակութի և պատմության հանդեպ:

1. Լրացնել դասագրքերի ֆոնդի հաշվառման մատյան

2. Բոլոր ուսուցիչներին ապահովել դասագրքերով ու մեթոդական գրականությամբ:

3. Դպրոցական դասագրքերի բաշխումը ըստ դասարանների

1 – 4-րդ դասարան (առանց ներդրման)

5-9-րդ դասարան

10-12-րդ դասարան

4. Կազմել՝ ա) հաշվետվություն դասագրքերի ֆոնդի վերաբերյալ

բ) սոց.անապահով աշակերտների բացահայտում և հաշվառում:

գ) սոց.անապահով և ԿԱՊԿՈՒ սովորողներին դասագրքերով օգնության կազմակերպում:

Ժամկետը	Ովքեր են մասնակցում	Պատասխանատու անձ
28.08.2022	գրադարանավար	Գրադարանավար Ալինա Մարաբյան
03.09.2022	դասվար դասղեկ	
05.09.2022	Սոց. մանկավարժ	

Հավաքագրել վարձույթով տրվող դասագրքերի գումարը և մուտքագրել շրջանառու ֆոնդի հաշվեհամարին.

Ժամկետը	Ովքեր են մասնակցում	Պատասխանատու անձ
01.09.2022	գրադարանավար	Գրադարանավար
01.11.2022	Ծնող կոմիտե դասղեկներ	

Ստուգել ըստ դասարանների աշակերտների դասագրքերի ապահովածությունը:

1. Կազմակերպել միջոցառումներ նշանավոր և հիշարժան օրերի վերաբերյալ ուստարվա ընթացքում:

2. Աշակերտներին բաժանորդագրել մանկապատանեկան ամսագրերին և թերթերին սեպտեմբեր ամսին:

3. Կազմակերպել տարրական դասարաններում հեքիաթների և այլ մանկավարժական գրքերի ընթերցումներ ուստարվա ընթացքում :

4. Ավելացնել ընթերցողների ակտիվի քանակը, ընդգրկել շատ աշակերտների, ուսուցիչների ուստարվա ընթացքում:

5. Ձևավորել գրադարանային պլակատներ՝ նվիրված տոն օրերին, հիշարժան և նշանավոր տարեթվերին :

6. Գրադարանն ապահովել գրենական պիտույքներով և ընթերցողի քարտերով:

1. Աշակերտների մոտ միջոցառումների միջոցով զարգացնել պատասխանատվություն, հարգանք երկրի մշակույթի և պատմության հանդեպ

2. Ուսումնական տարին սկսեցինք «Գիտելիքի օրվան» նվիրված միջոցառմամբ, որն ազդարարում է ուսումնական տարվա սկիզբը:

3. Սեպտեմբերին Անկախության օրվան նվիրված կազմակերպել միջոցառում:

4. Հոկտեմբերի 5-ին «Ուսուցչի օրն »է: Շնորհավորել բոլոր ուսուցիչներին՝ մաղթելով պայծառ, խաղաղ ու լուսավոր օրեր:

5. Նշել հոկտեմբերին Վանաձորի՝ մեր քաղաքի օրը:

6. Նշել գրադարանի օրը՝ հոկտեմբերի 7-ին:

7. 1988թ երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված օր:

8. Ամանոր և Սուրբ Ծնունդ

9. Կանանց միամսյակին նվիրված օր

10. Մեծ եղեռնի հիշատակին նվիրված օր

11. Գրադարանում կազմակերպել գրքերի ցուցադրություններ:

12. Կազմակերպել « Աշուն » խորագրով պոեզիայի ժամ օգտվելով Վահան Տերյանի աշնանաը նվիրված բանաստեղծություններից:

13. Կազմակերպել բարձր դասարաններում հարցազրույց «Մասնագիտական կողմնորոշում » թեմայով :

1. Կազմակերպել միջոցառում «Գրքի օրվան » նվիրված՝ փետրվարի 19-ին: ինչպես նաև նշել մեծ բանաստեղծ՝ Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը, որը համընկնում է «Գիրք նվիրելու » օրվա հետ:

2. Փետրվարի 21-ը «Մայրենի լեզվի» օրն է : Փայփայենք մեր լեզուն, զարգացնենք մեր ոսկեղենիկը և յուրաքանչյուրս պատասխանատվություն կրենք այն մաքուր, անաղարտ ու գեղեցիկ պահպանելու գործում, գիտակցենք ու գնահատենք մեզ բաժին հասած երջանկությունը: Շնորհավոր մայրենիի միջազգային տոնը: Լինենք նրա արժանի կրողն ու փոխանցողը:

Մայրենի լեզու իմ շատ սիրելի

Այնքան շքեղ ես ու սքանչելի

Երդվում եմ քեզ անաղարտ պահել

Քո ճոխ բառերով խոսել ու սիրել:

3. Ամեն ամիս շրջել դասարաններում, ստուգել դասագրքերի վիճակը:Հնամաշ դասագրքերը ստուգել, վերանորոգել

4. Գրադարանում կազմակերպել գրքահավաք: Դպրոցի աշակերտները սիրով մասնակցում են այդ գործին և գրքեր են նվիրում դպրոցի գրադարանին:

2022-2023 ուստարվա վարձակալությամբ տրվող դասագրքերի հետ ընդունում և հաշվառում: